

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձբաղվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը 2002թ. հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1415.6 հազ. մարդ, որի 90.6%-ը կամ 1281.9 հազ. մարդ (2001թ. նկատմամբ 17 հազարով ավելի) զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.4%-ը կամ 133.7 հազ. մարդ չեն ունեցել կայուն աշխատանք, գրանցվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսապես ակտիվ բնակչության կազմն ըստ 2002թ. եռամսյակների¹

միջինը ժամանակաշրջանի համար

	Տնտեսապես ակտիվ բնակչություն		այդ թվում՝	
	հազ. մարդ	%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ	զբաղվածության մակարդակը	պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը
Հունվար-մարտ	1418.4	99.1	90.3	9.7
Հունվար-հունիս	1418.5	100.3	90.4	9.6
Հունվար-սեպտեմբեր	1418.0	100.3	90.5	9.5
Հունվար-դեկտեմբեր	1415.6	100.3	90.6	9.4

Ըստ գնահատման, հունվար-դեկտեմբերին մասնավոր հատվածում զբաղվածները կազմել են զբաղված բնակչության 77.0%-ը, պետական հատվածում և կառավարման համակարգում՝ 22.6%-ը, հասարակական և կրոնական կազմակերպություններում ու հիմնադրամներում զբաղվածները՝ 0.4%-ը: Պետական հատվածում և կառավարման համակարգում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում 2002թ. հունվար-դեկտեմբերին նվազել է 1.9%-ով, իսկ մասնավոր հատվածում զբաղվածներինը, ընդհակառակն, ավելացել 2.3%-ով: Միայն պետական հատվածում զբաղվածների թվաքանակը 2001թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ նվազել է 7.6%-ով, իսկ մասնավոր հատվածում (առանց ինքնազբաղվածության և գյուղացիական տնտեսությունների) ավելացել 5.6%-ով:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 32.0%-ի կամ 409.6 հազարի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է մոտ 9000 սուբյեկտներից՝ անսական և եռամսյակային պարբերականությամբ հավաքագրվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: Ցուցակային կազմի աշխատողներից զատ, վերոնշյալ սուբյեկտներում համատեղությամբ և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա, 2002թ. հունվար-սեպտեմբերին զբաղված են եղել 19.7 հազ.մարդ: Տարեսկզբի համեմատությամբ վերջիններիս թվաքանակն ավելացել է 68.4%-ով, իսկ 2001թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ՝ 1.0%-ով: Ցուցակային կազմի աշխատողների ընդհանուր թվաքանակում արտաքին համատեղողները կազմել են 1.8%, քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա աշխատողները՝ 3.0%: Համատեղությամբ և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերով աշխատողների տեսակարար կշիռն առավել բարձր է շինարարության մեջ (22.4%), առողջապահության ոլորտում (18.8%), արդյունաբերությունում (16.8%) և կրթության համակարգում (15.5%):

¹ Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը զբաղված և պաշտոնապես գրանցված գործազուրկ բնակչության թվաքանակների հանրագումարն է: Ձբաղվածների թվաքանակի գնահատումը կատարվել է սուբյեկտներից՝ անսական և եռամսյակային պարբերականությամբ հավաքագրվող պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, ինքնազբաղվածների (ներառյալ գյուղացիական տնտեսություններում զբաղվածները) թվաքանակի՝ ըստ ընտրանքային հետազոտությունների արդյունքների և վարչական վիճակագրության տվյալների հիման վրա կատարված հաշվարկներով:

2002թ. հունվար-սեպտեմբերին նշված կազմակերպություններում աշխատանքի են ընդունվել 40.4 հազ.մարդ, որոնց 21.3%-ը կամ 8.6 հազ.մարդ՝ նոր ստեղծված աշխատատեղերում: Նոր ստեղծված աշխատատեղերի տեսակարար կշիռը բարձր է հատկապես արդյունաբերության (32.1%), շինարարության (28.2%), կրթության (9.1%), բնակարանային-կոմունալ տնտեսության և կենցաղսպասարկման (7.6%) ոլորտներում, իսկ մնացած ճյուղերում այն տատանվել է 0.9%-ից (սոցիալական ոլորտ) մինչև 3.4%-ի (առևտուր և հանրային սնունդ) սահմաններում: Նույն ժամանակաշրջանում աշխատանքից դուրս են եկել 48.8 հազ.մարդ, որոնցից 54.9%-ը՝ սեփական կամքով, 22.7%-ը՝ հաստիքների կրճատման և 22.4%-ը՝ այլ պատճառներով: Ընդ որում, 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատ սեփական կամքով ազատվածների տեսակարար կշիռը նվազել է 0.7%-ով, իսկ այլ պատճառներով ազատվածներինը՝ 3.4%-ով: Փոխարենը, հաստիքների կրճատմամբ պայմանավորված ազատվածների տեսակարար կշիռն ավելացել է 4.1%-ով: Փոխարենը, հաստիքների կրճատմամբ պայմանավորված, ազատվածների տեսակարար կշիռն ավելացել է 4.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է սեփականաշնորհված կազմակերպություններում մինչ սեփականաշնորհումն առկա աշխատողների ցուցակային կազմերի վերանայմամբ, վաղուց անորոշ ժամկետով հարկադիր վարչական արձակուրդներում գտնվող աշխատողների թվաքանակի կրճատմամբ:

Աշխատատեղերի շրջապտույտի գործակիցն ըստ աշխատանքից դուրս գալու բոլոր պատճառների, 2002թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1.2 և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ նվազել 0.1-ով:

2002թ. հունվար-սեպտեմբերին վերը նշված սուբյեկտների 22.0 հազ. աշխատողներ կամ ողջ անձնակազմի 5.4%-ը հարկադիր վարչական արձակուրդում են գտնվել, որոնցից 90.5%-ը՝ առանց աշխատավարձի պահպանման: Վերջիններիս տեսակարար կշիռը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ նվազել է 5.3%-ով, իսկ ընդամենը հարկադիր վարչական արձակուրդում գտնվողներինն ավելացել է 1.7%-ով: Հարկադիր վարչական արձակուրդում և նրանցից՝ առանց աշխատավարձի պահպանման՝ գտնվողների թվաքանակը 2001թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 3.3% և 5.7%-ով: Հարկադիր վարչական արձակուրդում գնվողների գերակշիռ մասը՝ 80.9%-ը, դարձյալ կենտրոնացվել է արդյունաբերական, իսկ 6.6%-ը՝ շինարարական կազմակերպություններում, 3.8%-ը՝ կրթության, 3.2%-ը՝ տրանսպորտի համակարգում, 2.5%-ը՝ գիտության ոլորտում, 1.3%-ը՝ բնակարանային-կոմունալ տնտեսության և կենցաղսպասարկման ոլորտում, 0.7%-ը՝ առողջապահության ոլորտում և 1.0%-ը՝ տնտեսության մնացած ճյուղերում:

2002թ. դեկտեմբերի վերջին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվելու նպատակով հիշյալ գործակալությունում հաշվառման են կանգնել 154.1 հազ. աշխատանք փնտրողներ, որոնցից 152.5 հազարը եղել են չզբաղվածներ: Ձբաղվածները, որոնք ցանկացել են ստանալ լրացուցիչ աշխատանք, կազմել են 1.0%-ը, իսկ աշխատել ցանկացող կենսաթոշակառուները՝ 0.1%:

Ըստ «ՀՀ Ձբաղվածության ծառայություն» գործակալության տվյալների, աշխատանք փնտրող չզբաղվածների 0.7%-ը եղել են կենսաթոշակառուներ, 2.3%-ը՝ մինչև մեկ տարի աշխատանքային ստաժ ունեցողները և 13.5%-ը՝ առաջին անգամ աշխատանք փնտրողները: Ընդ որում, առաջին անգամ աշխատանք փնտրողների 24.4%-ը եղել են բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և հանրակրթական դպրոցների շրջանավարտներ: Չզբաղվածներից գործազուրկի կարգավիճակ ստացել են 83.5%-ը: Վերջիններիս մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում բանվորները՝ 67.0%: Ընդ որում գործազուրկների թվաքանակը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 1.2%-ով, իսկ նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ՝ 8.0%-ով:

2002թ. տարեսկզբից գործազուրկի կարգավիճակ ստացել են 15.5 հազ.մարդ, նրանցից 0.8 հազարը՝ դեկտեմբերին, հաշվառումից հանվել են 26.5 հազարը, այդ թվում աշխատանքի տեղավորման պատճառով՝ 29.1%-ը, 0.1%-ը՝ վաղաժամկետ կենսաթոշակի ձևակերպման հետ կապված, մնացած 70.9%-ը՝ այլ պատճառներով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի¹ 2002թ. դեկտեմբերին

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		Նրանցից գործազուրկներ			
	ընդամենը, հազ. մարդ	%-ով՝ նախորդ տարվա նկատմամբ	ընդամենը, հազ. մարդ	այդ թվում՝ կանայք	%-ով՝ նախորդ տարվա նկատմամբ ընդամենը	այդ թվում՝ կանայք
Ընդամենը	154.1	94.7	127.3	85.7	92.0	93.9
ք.Երևան	37.3	86.7	33.8	22.4	85.6	87.8
Արագածոտն	2.2	100.0	1.4	0.9	93.3	100.0
Արարատ	6.4	85.3	5.0	3.3	83.3	84.6
Արմավիր	8.4	94.4	5.9	3.3	90.8	89.2
Գեղարքունիք	8.5	96.6	6.2	4.0	98.4	97.6
Լոռի	25.8	103.6	21.4	14.2	100.9	102.2
Կոտայք	9.4	84.7	7.1	4.9	81.6	86.0
Շիրակ	32.5	96.7	27.5	21.1	94.2	97.7
Սյունիք	16.7	103.1	13.8	8.3	100.7	100.0
Վայոց ձոր	2.1	100.0	1.7	1.1	100.0	91.7
Տավուշ	4.8	106.5	3.5	2.2	85.4	88.0

Գործազուրկ բնակչությունն առավելապես (94.4%) կենտրոնացած է քաղաքային բնակավայրերում, նրանցից 26.6%-ը՝ Երևան, 19.9%-ը՝ Գյումրի և 11.2%-ը՝ Վանաձոր քաղաքներում: Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակից կանայք կազմել են 67.3%: Այդ ցուցանիշը 2001թ. դեկտեմբերի նկատմամբ աճել է 1.3%-ով:

Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ սեռի, տարիքային և կրթական կազմի,² 2002թ. դեկտեմբերի վերջի դրությամբ

	Գործազուրկների թվաքանակը, %-ով՝ ընդհանուրի նկատմամբ	
	ընդամենը	այդ թվում՝ կանայք
Ընդամենը գործազուրկներ	100	100
<i>այդ թվում.</i>		
մինչև 18 տարեկան	0.4	0.4
18-22	6.0	5.6
23-30	21.8	20.0
31-50	63.0	66.0
51 և բարձր	8.8	8.0
<i>կրթությամբ.</i>		
բարձրագույն	12.5	11.7
միջնակարգ մասնագիտական	25.1	24.0
ընդհանուր միջնակարգ	56.8	59.8
թերի միջնակարգ	5.6	4.5

2002թ. տարեսկզբից 155.5 հազ. աշխատանք փնտրողներից աշխատանքի տեղավորվել են 8.5 հազ. մարդ, այդ թվում 90.8%-ը՝ գործազուրկներ: Առաջին անգամ աշխատանք փնտրողներից աշխատանքի տեղավորվածները կազմել են ընդամենը աշխատանքի տեղավորվածների 5.7%-ը: Վերջիններիս տեսակարար կշիռը տնտեսության պետական հատվածի

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

կազմակերպություններում կազմել է 39.9%-ը, մասնավոր հատվածում՝ 45.9%-ը, հասարակական՝ 0.7%-ը և սեփականության խառը տիպի կազմակերպություններում՝ 13.5%-ը:

Զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից խորհրդատվություն ստացած անձանց թվաքանակը կազմել է 33.3 հազ.մարդ: Ընդ որում, նրանցից.

- 37.3%-ը՝ աշխատանքի և զբաղվածության օրենսդրության հարցերով,
- 15.9%-ը՝ մասնագիտական կողմնորոշման,
- 14.4%-ը՝ մասնագիտական ուսուցման,
- 7.7%-ը՝ մասնագիտական ընտրության,
- 5.8%-ը՝ աշխատանքի փոփոխման,
- 18.9%-ը՝ այլ հարցերով:

Տարեսկզբից գործազուրկների ընդհանուր թվաքանակից մասնագիտական ուսուցում անցել են 489 մարդ, որոնցից կանայք կազմել են 86.3%: Մասնագիտական ուսուցում անցածներից աշխատանքի են տեղավորվել 252-ը, նրանցից կանայք կազմել են 84.9%, երիտասարդները՝ 31.7%: Մասնագիտական ուսուցում ստացած հաշմանդամների թվաքանակը նույն ժամանակաշրջանում կազմել է ընդամենը 138 մարդ, նրանցից վերամասնագիտացվել են 66-ը, մասնագիտական պատրաստում անցել՝ 64-ը և բարձրացրել են որակավորումը 8 մարդ:

ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած 11.7 հազ.մարդ մասնակցել են հասարակական աշխատանքների, նրանցից 7.8 հազարը եղել են գործազուրկ:

2002թ. տարեսկզբից աշխատանքի տեղավորված 7695 գործազուրկների 4.9%-ի գործազրկության տևողությունը կազմել է 1-3 ամիս, 6.8%-ինը՝ 3-6 ամիս, 14.5%-ինը՝ 6-12 ամիս, 73.8%-ինը՝ 12 ամիս և ավելի, իսկ աշխատանքի տեղավորման միջին տևողությունը (գործազուրկի կարգավիճակ ստանալու պահից մինչև աշխատանքի տեղավորման պահը) կազմել է 15.0 ամիս և 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 0.9 ամսով: 2002թ. դեկտեմբերին գործազրկության միջին տևողությունը կազմել է 15.6 ամիս և 2001թ. դեկտեմբերի նկատմամբ՝ աճել 0.1 ամսով:

2002թ. դեկտեմբերին մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 170 չզբաղված մարդ:

Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության դինամիկան 2002թ. ըստ ամիսների¹

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ	Զբաղվածների մարդ	Թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով %	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ
Հունվար	537	289	93.2	92.3
Փետրվար	589	271	93.8	78.6
Մարտ	693	230	84.9	75.7
Ապրիլ	846	188	81.7	46.5
Մայիս	821	193	102.7	49.1
Հունիս	972	162	83.9	53.3
Հուլիս	963	164	101.2	65.1
Օգոստոս	949	165	100.6	74.7
Սեպտեմբեր	846	184	111.5	81.1
Հոկտեմբեր	895	173	94.0	71.5
Նոյեմբեր	827	186	107.5	69.7
Դեկտեմբեր	896	170	91.4	54.8


Գործատուների կողմից պաշտոնապես ներկայացված աշխատուժի պահանջարկն առավել մեծ է արդյունաբերության ոլորտում, որը կազմել է ընդհանուր պահանջարկի

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով

52.0%-ը: Աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկն առավել մեծ է ծառայողական այնպիսի մասնագիտությունների նկատմամբ, ինչպիսիք են մանկավարժները (14.7%), բժիշկները (1.2%), իսկ բանվորական մասնագիտություններից՝ ջուլիակները (23.8%), վարորդները (6.3%), մասնագիտություն չպահանջող բանվորները (17.3%):

ՀՀ մարզերում աշխատանք փնտրողներից աշխատանքի տեղավորվածների տեսակարար կշիռը տատանվել է 1.7%-ից (Լոռու մարզ) 14.5%-ի (Արագածոտնի մարզ) սահմաններում: Այդ ցուցանիշի տատանումն ըստ մարզերի գրաֆիկորեն պատկերված է ստորև.

(%-ով՝ աշխատանք փնտրողների ընդհանուր թվաքանակի նկատմամբ)



2002թ. դեկտեմբերին նպաստառու գործազուրկների թվաքանակը հանրապետությունում կազմել է 6.0 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3214 դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում դրամական օգնություն են ստացել 17.9 հազ. գործազուրկներ, օգնության միջին չափը՝ 1497 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկված որպես զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2002թ. դեկտեմբերին կազմել է 9.1% և նախորդ ամսվա նկատմամբ նվազել 0.1%-ով, իսկ 2001թ. նույն ամսվա նկատմամբ՝ 0.8%-ով:

ՀՀ բնակչության զբաղվածության վերաբերյալ առավել իրատեսական պատկերացում ունենալու նպատակով 2002թ. զուգահեռաբար իրականացվել է տնային տնտեսությունների միջոցով աշխատուժի ընտրանքային հետազոտություն՝ կիսամյակային պարբերականությամբ (մարտ և սեպտեմբեր ամիսներ) :


2002թ. II եռամսյակում իրականացվել է աշխատուժի ընտրանքային հետազոտություն տնային տնտեսությունների կենսամակարդակի ընտրանքային հետազոտությամբ ընդգրկված 1161 տնային տնտեսություններում (ՀՀ 11 մարզերի 12 քաղաքային և 17 գյուղական բնակավայրերում): Հետազոտությանը մասնակցել են 1160 տնային տնտեսություն կամ ընտրանքային համակցության 99.9%-ը:

Լրացվել է 2817 անհատական հարցաթերթ 16-70 տարեկան, ինչպես նաև տարիքային այդ խմբից մեծ կամ փոքր, բայց աշխատող բնակչության համար: Վերը նշված տարիքային խմբին համապատասխանող բնակչության 17.5%-ը կամ 493 մարդ տարբեր պատճառներով չի մասնակցել հարցմանը:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ըստ հետազոտության արդյունքների, զբաղված բնակչությունը կազմել է տնտեսապես ակտիվ բնակչության 61.9%-ը: Ընդ որում, կանայք կազմել են զբաղված բնակչության 43.4%-ը, տղամարդիկ՝ 56.6%-ը: Ջբաղված բնակչության կազմում ամենացածր տեսակարար կշիռն ունեցել են 15-19 տարեկանները՝ 0.6%-ը (առանձնացել են 70 և ավելի տարիք ունեցողները՝ 0.8%), 20-24, 25-29 և 30-34 տարեկանները կազմել են համապատասխանաբար՝ 5.9, 8.3 և 8.4%, իսկ հաջորդող 35-54 տարիքային խմբերում արդեն նկատվել է կտրուկ աճ և տատանվել է 12.9%-ից մինչև 20.2%-ի սահմաններում: Դրանից հետո կրկին արձանագրվել է նվազման միտում:

Ջբաղված բնակչության տեսակարար կշիռներն ըստ սեռատարիքային կազմի



Աշխատուժի ընտրանքային հետազոտությունը հնարավորություն է տալիս ստանալ տնտեսապես ակտիվ բնակչության ոչ միայն թվաքանակը, այլ նաև դրա բաշխումն ըստ գործունեության ոլորտների: Այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ տնտեսապես ակտիվ բնակչությունն իր մեջ ներառում է գործազուրկների այն խումբը, որը մինչև գործազուրկ համարվելն ունեցել է աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք: Այսպես, գործազուրկ բնակչության միայն 31%-ն ունի աշխատանքային փորձ, մնացած 69%-ն աշխատանքի շուկա է փորձում ինտեգրվել առաջին անգամ:

Ըստ հետազոտությանը ստացված պատասխանների, ընդամենը զբաղվածների մեջ զբաղվածության ամենաբարձր տեսակարար կշիռն արձանագրվել է գյուղատնտեսության, որսորդության, անտառաբուծության ոլորտում՝ 22.3%, կրթության՝ 14.8%, պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոցիալական ապահովագրության ոլորտում՝ 12.7%, առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային ապրանքների և անձնական օգտագործման իրերի նորոգման՝ 13.6%, մնացած ոլորտներում այն տատանվել է 0.1%-ից (վարձու սպասարկմամբ մասնավոր տնային տնտեսություններ) մինչև 9.9% (վերամշակող արդյունաբերություն): Հարցման պահին զբաղվածների 45.3%-ը զբաղված է եղել տնտեսության պետական հատվածում, իսկ 53.4%-ը՝ մասնավոր:

Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի բաշխումն ըստ գործունեության ոլորտների

(%-ով՝ ընդամենի նկատմամբ)

	Ընդամենը տնտեսապես ակտիվ բնակչություն	Ոլորտ	
		զբաղվածներ	գործազուրկներ
Ընդամենը	100	100	100
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառաբուծություն	19.5	22.3	5.1
Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	0.5	0.4	0.9
Էներգետիկա, գազ և ջրամատակարարում	4.3	3.9	6.0
Վերամշակող արդյունաբերություն	12.8	9.9	28.4
Շինարարություն	5.0	3.9	10.7

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Ընդամենը տնտեսապես ակտիվ բնակչություն	նրանցից	
		զբաղվածներ	գործազուրկներ
Մեծածախ և մանրածախ առևտուր, կենցաղային ապրանքների և անձնական օգտագործման առարկաների նորոգում	13.6	13.6	14.0
Հյուրանոցներ և ռեստորաններ	1.3	1.0	2.8
Տրանսպորտ, պահեստային տնտեսություն և կապ	6.1	6.1	6.0
Ֆինանսական միջնորդություն	0.7	0.8	0
Անշարժ գույքի գործառնություն, վարձ. և առևտր. գործունեություն	0.8	0.5	2.3
Պետական կառավարում և պաշտպանություն, պատաղիք սոցիալական ապահովագրություն	12.2	12.7	9.3
Կրթություն	13.2	14.8	4.7
Առողջապահություն և սոց. ծառայություն	6.2	6.3	5.6
Կոմունալ, սոցիալական և անհատական այլ ծառայություններ	3.7	3.7	4.2
Այլ	0.3	0.2	0.5


Հետազոտությամբ ստացված պատասխանների արդյունքում, զբաղված բնակչության թվաքանակը դասակարգվել է ըստ զբաղվածության կարգավիճակի: Այսպես, զբաղվածների 63.7%-ը կազմել են վարձու աշխատողները, 29.7%-ը՝ ինքնազբաղվածները, 1.0%-ը՝ գործատուները և 5.6%-ը՝ այլ կարգավիճակ ունեցողները: Ինքնազբաղվածները հիմնականում ընդգրկված են գյուղատնտեսության մեջ՝ 52.7% և առևտրի ոլորտում՝ 30.5%:

Զբաղված բնակչության թվաքանակի բաշխումն ըստ ունեցած աշխատանքի տեսակի բնութագրվում է հետևյալ կերպ. հետազոտության պահին 75.6%-ի աշխատանքը եղել է մշտական, 12.5%-ի՝ սեզոնային, 11.0%-ի՝ ժամանակավոր և 0.9%-ն ունեցել է միանգամյա աշխատանք:

Աշխատանքի շուկայի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից հատկապես կարևորվում են սեզոնային և միանգամյա աշխատանքով զբաղվածները, քանի որ ըստ էության, նրանք պոտենցիալ գործազուրկներ են: Ոչ մշտական աշխատանք ունեցողների 82.5%-ը չի կարողացել գտնել մշտական աշխատանք, 8.7%-ն ի վիճակի չի եղել մշտական աշխատանք կատարելու, 6.3%-ը չի ցանկացել և 2.5%-ի աշխատանքը չի եղել մշտական՝ այլ պատճառներով:

Զբաղվածների 77.2%-ը կազմել են անուսնացածները, միայնակ/երբեք չամուսնացածները՝ 13.9%, այրիները՝ 4.8% և ամուսնալուծվածները՝ 4.1%: Հարկ է նշել, որ ցածր է կրկնակի զբաղվածություն ունեցողների տեսակարար կշիռը, որը կազմել է զբաղված բնակչության 2.8%-ը, իսկ ըստ ամուսնական վիճակի կրկնակի զբաղվածություն ունեցողների 80.7%-ն ամուսնացածներն են (վերջիններիս 68%-ը տղամարդիկ են, 32%-ը՝ կանայք): Կրկնակի զբաղվածություն ունեցողների մոտ 54.8%-ն իրենց գործունեությունն իրականացրել են ինքնազբաղվածության ոլորտում:

Ըստ կրթական մակարդակի, զբաղված բնակչության կազմում բարձրագույն կրթություն ունեցողները կազմել են 24.5%, միջնակարգ մասնագիտականը՝ 29.4%, միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ունեցողները՝ համապատասխանաբար, 37.4% և 5.4%: Հարցմանը մասնակցած քաղաքացիների 62.4%-ն ունեցել են մասնագիտություն: Զբաղված բնակչության 76.1%-ի աշխատանքը համապատասխանել է ունեցած որակավորմանը/մասնագիտությանը, 21,6%-ի կատարած աշխատանքը ցածր է եղել որակավորման ունեցած մակարդակից և 2,3%-ը կատարել է ունեցած որակավորման մակարդակից բարձր որակավորում պահանջող աշխատանք:



Ձբաղվածների թվաքանակն ըստ կրթական մակարդակի և սեռի

Ձբաղված բնակչության 57.5%-ն աշխատել է լրիվ աշխատանքային օր կամ շաբաթ, 24.2%-ը՝ ոչ լրիվ և 18.3%-ն՝ ավելի քան լրիվ աշխատանքային օր կամ շաբաթ: Ոչ լրիվ աշխատանքային օրվա/շաբաթվա տևողությամբ աշխատող քաղաքացիների 47.4%-ը չի կարողացել գտնել լրիվ աշխատանքային օրվա տևողությամբ աշխատանք, 19.5%-ն աշխատանքային նման ռեժիմի է անցել գործատուի նախաձեռնությամբ, 19.5%-ը՝ չի ցանկացել աշխատել լրիվ օր կամ շաբաթ և 13.6%-ը՝ չունի լրիվ օր աշխատելու հնարավորություն: Ձբաղվածների 36.4%-ը ցանկություն է ունեցել փոխել աշխատանքը (նրանց 64.9%-ի աշխատանքը փոխելու պատճառն ավելի բարձր եկամտի ստացումն է): Աշխատանքը փոխելու ցանկություն ունեցողների 52.7%-ը վարձու աշխատողներ են:

Ըստ հետազոտության արդյունքների, զբաղված վարձու աշխատողների 21.8%-ը աշխատել է բանավոր պայմանավորվածությամբ: Նրանց տեսակարար կշիռն առավել բարձր է եղել մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում՝ 85.7%, շինարարությունում՝ 68.6%, հյուրանոցների և ռեստորանների համակարգում՝ 63.6%, իսկ մնացած ոլորտներում այն տատանվել է 33.3%-ից (անշարժ գույքի գործառնություն) մինչև 4.2%-ի (պետական կառավարում և պաշտպանություն) սահմաններում:

Հետազոտության իրականացմամբ հնարավորություն է ընձեռվել ստանալ տեղեկատվություն նաև չգրանցված զբաղվածության վերաբերյալ, որն ավելի շատ նկատելի է ինքնազբաղվածության ոլորտում: Այսպես, ըստ հարցման արդյունքների, հետազոտության պահին զբաղված գործատուների և ինքնազբաղվածների 97.2%-ը չգրանցված գործունեություն է իրականացրել գյուղատնտեսության, իսկ 29.0%-ը՝ առևտրի ոլորտում: Զգրանցված գործունեություն իրականացնողների 39.4%-ի աշխատանքը եղել է սեզոնային, 43.3%-ի՝ մշտական, 14.9%-ի՝ ժամանակավոր և 2.4%-ի՝ միանգամյա:

Աշխատուժի ընտրանքային հետազոտությունը հնարավորություն է ընձեռել պաշտոնապես գրանցված գործազրկությունից զատ, գնահատել նաև իրական գործազրկության չափերը, քանի որ վերը նշված հետազոտության հիմքում դրվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից առաջադրվող գործազրկության ստանդարտ սահմանումը, համաձայն որի գործազուրկ են համարվում բոլոր այն անձինք, ովքեր չեն ունեցել աշխատանք, փնտրել են աշխատանք և պատրաստ են եղել անմիջապես անցնել աշխատանքի: Իսկ պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակի հաշվարկումն իրականացվում է «Ձբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն, ըստ որի, գործազուրկ են համարվում 16 և բարձր տարիքի այն քաղաքացիները, ովքեր չունեն աշխատանք, դիմել են «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալություն՝ աշխատանք ստանալու նպատակով և ունեն առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ: Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակի ցուցանիշի հաշվարկման տեղեկատվական աղբյուրը հանդիսանում է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունը:

2002թ. II եռամսյակում 1161 տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների ամփոփված արդյունքներով գնահատվել է գործազրկության իրական մակարդակը, որը կազմել է տնտեսապես ակտիվ բնակչության 31.4%-ը:

Հատկանշական է, որ 2002թ. հանրապետությունում արձանագրվել է ինչպես պաշտոնական գործազրկության, այնպես էլ Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ ստացված գործազրկության մակարդակի նվազում: Առաջին դեպքում պաշտոնապես գրանցված գործազրկության միջին տարեկան մակարդակը նվազել է 1.0 տոկոսային կետով կամ 9.6%-ով (2002թ. 9.4%-ը՝ 2001թ. 10.4%-ի դիմաց), իսկ երկրորդ դեպքում՝ 1.4 տոկոսային կետով կամ 4.3%-ով (2002թ. 31.4%-ը՝ 2001թ. 32.8%-ի դիմաց):